

ՀՏԴ 82. 091

Գրականագիտություն

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՃԱԿԱՏԱԳԻ ՈՉ ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
«ԿՐԱԿԵ ԾԱՊԻԿ» ՎԵՌՈՒՄ  
ՄԵԼԻՆԵ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

**Բանալի բառեր՝** զեղագիտական ընկալում, հայրենիք-սփյուռք, տարագիր հայություն, կրակե շապիկ, ժամանակի և պատմության վիլխտփայություն, կատարելության ուղի, զաղթաշխարհ, իրատիս հայրենաներ, հայեցի դաստիարակություն:

**Ключевые слова.** Эстетическое восприятие, родина-диаспора, огненная рубашка, разбранные по лицу земли армяне, философия времени и эпохи, путь к совершенству, эмиграция, патриот-реалист, патриотическое воспитание.

**Key words:** Aesthetic perception, motherland-diaspora, scattered Armenians, fire shirt, the philosophy of time and history, the way of perfection emigration, realistic patriot, patriotic education.

**М. Согомонян**

**Судьба армянского народа в романе Вардгеса Петросяна “Огненная рубашка“**

В развитии армянской прозы неоспоримую роль сыграл В. Петросян. Судьба родины, боль родного народа, параллель родина-диаспора, тревога за сохранение национального облика армянской диаспоры составляют основу творческой тематики В. Петросяна. Чем глубже мы погружаемся в произведения В. Петросяна, тем больше мы ценим автора. Исследование показывает, что "Огненная рубашка" - песня, которая исходит из души и сердца.

**M. Soghomonyan**

**The Destiny of the Armenian People in “Fire Shirt“ by Vardges Petrosyan.**

Vardges Petrosyan played an undeniable role in the development of Armenian prose. The fate of his motherland, the pain of his native people, the parallel motherland-diaspora, concern for the preservation of the national image of the Armenian diaspora form the basis of Petrosyan's creative activity. The deeper we are immersed into V. Petrosyan's works the more we appreciate the author. The investigation shous that “Fire Shirt“ is a song that comes from his soul and heart.

Հայ արձակի զարգացման համակարգում անփոխարինելի է Վ. Պետրոսյանի դերը:

Վ. Պետրոսյանի ստեղծագործության հիմնական յենման հայրենիքի ճակատագիրն է, հայ ժողովրդի զավը, հայրենիք-սփյուռք զուգահենը: Ենիհնակին մտահոգում է սփյուռքում հայ հայ մնալու և հայեցի դաստիարակվելու հարցը: Որքան զնում ենք դեաի Վ. Պետրոսյան գրողի ստեղծագործության խորը, այնքան, ավելի ենք զնահատուում հենիհնակին: Ուսումնասիրություններից պարզվում է, որ հենիհնակի «կրակե շապիկ» երկը հոգու ու սրտի միջով անցած երկ է:

Հայ արձակի զարգացման համակարգում վարդգես Պետրոսյանը դարձավ ժանրային, ոճական նոր գծեր հայտնագործող հենիհնակմերից մեկը: Միանգամայն որոշակի արժեք ստացավ նրա զեղագիտական ընկալման, երևոյթական հայտնաբերություններից պարզվում է, որ հենիհնակի «կրակե շապիկ» երկը հոգու ու սրտի միջով անցած երկ է:

Լայն են Վարդգես Պետրոսյանի ստեղծագործությունների թեմատիկ-հոգական լոնդոնիման սահմանները: Նրա կենսական ճշմարտությունն ինքնատիպ է ու հետաքրքիր: Ներկան կապվում է անցյալին, իսկ վերջինս արտահայտվում է ներկայի մեջ՝ իբրև անմար զգացմունք: Իրենց ներսում անցյալ են հայտնաբերում ներկայում լիարյուն կյանք վարող բոլոր հերոսները: Սա մարդու ներաշխարհի խորբնը թափանցնելու, նրա զաղտնիքները բացահայտելու մի գործողություն է:

Վարդգես Պետրոսյանի ապրած և չապրած տարիների գերազույն խորհուրդը հայրենիք և ժողովուրդ զաղափարն էր: «Հայրենիք, որի զավն իրավես կրակե շապիկ էր գրողի համար, և ժողովուրդ՝ այդ բազմաչարչար գոյական անունը, իր հավաքականության մեջ սիրելի ու անծանոթ, հազարադեմ ու դիմագորկ, սրբազն խաչ ու պիտան մանրադրամ»<sup>1</sup>, գրում է Լևոն Անանյանը:

Վ. Պետրոսյանի «կրակե շապիկը» ինքնայրումով ու ինքնարննության սկզբունքով գրված երկ է, ինքնասուում սնվական վարք ու ապրելածնի խորբնը, մեր ժողովրդի անցյալի պատմության շմարած հիշողությունն է՝ շաղախած սփյուռքի զավով ու մեր վերափոխված կյանքի ուրախությամբ: «կրակե շապիկ»-ը հայրենիքը կորցրած և աշխարհու մեկ սփոխած տարագիր հայության կյանքի ողի-

<sup>1</sup> Լևոն Անանյան, Վ. Պ., Մեր ժողովուրդն իմն է՝ ինչպես... իմ վիշտը, Եր., 2003, էջ 4

սականն է՝ սիրո, ցավի ու տառապանքի, վշտի և ուրախության նլսէջներով: «Դատարկ աթոռներ ծննդյան տոնին» վեպում ներկայացվում է մեր այսօրվա բարդ ու հակասական կյանքն իր բազմաբովանդակ էությամբ, իր վերնլրներով ու վայրէջքներով, իր հոգսներով, մարդկային ճակատագրերի բախումով ու ներջանկության ձգտմամբ: Այստեղ իրական կյանքն է թևաբախում, և գրողը հոգու շարժման ներքին լարմամբ պնդում է իր հերոսների ներաշխարհը, բացում նոր ծալքներ:

Անվանի գրողը լայն տեսադաշտի մեջ առավ հայրենիք-սփյուռք զուգահեռող, փորձն քննական հայցքով դիտել հայոց եղենին տարբեր դիրքորոշումների կծիկը և նորօրյա մեկնությունների հանգույցներում որոնեց պատմության և ժամանակի փիլիսոփայությունը: Վեպի հերոսները՝ Շիրակ պապն ու Նունե տատը, մեր ժողովրդի կենդանի պատմությունն են, նրանց աչքներում, հայացքներում, ուրախության և տիլարության մեջ ամբարված են մեր ժողովրդի ցավն ու դառնությունը: Պապն իր ժողովրդի անցյալ կյանքի վկան է, վեր հարնելով արյունոտ մանկությունից, կարողացել է բարությամբ ջերմացնել շրջապատը:

Հարուստ ներաշխարհով է օժտված Նունե տատը: Նրա առանձնասանյակը յուրահասոուկ թանգարան է. պատճենին հարազատների լուսանկարներն են. մի պատին՝ եղենին զոհ դարձածների դատարկ շրջանակները: Նունե մայրիկի հարազատ աշխարհն է դա, որով ապրում ու շնչում է հայոց ոգու և կենսունակության մարմնացում դարձած մեծ մայրիկը: Նա կրիվ է տալիս ճակատագրի հետ, համաձայն չէ պատմությանը, դեմ է աշխարհի քարտեզին, որի վրա զծված սլաքները տարածվում են բոլոր աշխարհամասերով և արտահայտվում մեկ բառով՝ սփյուռք: Մոսկովյան ռեստորանում Ռիզա Էֆենդին տառում է, որ ցավում է հայի ճակատագրի համար, լնդրում է հավատալ, որ խորապես անկենդ է... բայց աշխարհի տարբեր ծայրերում իր ոտնահետքերը թողած հայն ինչպես հավատա Ռիզա Էֆենդուն, երբ երևան եկած նրա որդին, Շիրակ պապի տանը նայելով քարտեզին, խոր հոգուց է հանում, սիրտը մղկտում է, երբ նայում է Թուրքիայի քարտեզին՝ Եվրոպայից մինչև Կասպից ծով. ինչի՞ց ինչ մնաց...

Սփյուռքը մի մեծ հնոց է, որ իրենց սրտի կրակն են վառ պահում շատ հայեր, կամ ինչպես Սյուզի Վահանյանն է ասում՝ սփյուռքը ծուլարան է, այստեղ թիզ մը ամեն տեղ ու ամեն օր մեր բարութենեն բան մը կկորցնենք:

Որքան էլ, որ Վարուժան Շիրակյանը դատապարտի հորը՝ Ամերիկայում ապրելու և իր մանկությունը խորտակելու համար, այնուամենայնիվ, զգում է, որ հոր սպիացած վերքից արյուն է կաթում, և նրան միշտ տանջում է՝ «Ես ի՞նչ զործ ունեմ այստեղ» բազմակնծիր հարցը: Որքան էլ Վարուժանը մեղադրական կարդա Աղիս-Աքնեբայում և Անգլիայում ապրող Զորջ ու Տիգրան Վահանյանների հասցեին, հասկանում է նրանց ցավը, սարսափով է լսում նրանց հոր պատմությունը, հայր, որ բնիքանը խուփ թոնրի պես ինքը վարեց ներսից, քանի որ նրա միակ չսպասված ազգականը հայոց լեզուն էր մնացել, որին չմոռանալու համար տարիներ շարունակ ինքն իրեն խոսում էր գիշերները: Այդ դժբախտ մարդու սրտի մեջ կաթ-կաթ ծորացող «հուշերի» սևակարմիր թեն ուշացումով, բայց «ներկել էր» նաև որդուն՝ Տիգրանին, որը, չնայած հուշեր անգամ չունի, բայց անհուն տագնապ է ապրում, ազնվորեն մտահոգվում իր սերնդակիցների հայ մնալու համար:

Վարուժան Շիրակյան՝ գրող, խմբագիր, հրապարակախոս, հոգեկան խոր լիցքներով օժտված անհատի մարմնացում, մարդկային ճակատագրով տառապող ու խորհող այն անհատն է, որ անհանգիստ որոնումներով հաճախ է գտնում ու կորցնում կյանքի խճճված կծիկի ծայրերը: «Կրակն շապիկ» Շիրակյանի մենախոսությունն է, մենախոսության ժամերին մտորումներում նա վերլուծում է իր կենսագրությունը, ապրած ու չապրած տարիների խորհուրդը: Որտե՞ղ զտնել կատարելության ուղին... Վարուժանի գրողական էության մեջ արձագանք են զտնում մարդկային հոգին ճանաչելու վերաբերյալ հայր սուրբի դաստողությունները՝ չէ՞ որ մի բան արժեն ինքնախոսության, աստծո հանդեպ հավատի, խնդի խայլի այն արթնացումները, որ դարենք շարունակ կարգավորել են մարդկային բարոյականությունը: Սյուզին գնահատում է Շիրակյանի գրականությունը, բանզի նրա անունը ցավ է: Իսկ ստեղի տակ մնացած գրողի կինը՝ Մարին, հակառակը՝ մտածում է, որ գրող-հոգերանը, պարտավոր է ճանաչել ութը տարի մի հարկի տակ ապրած կնոջը: Չի էլ ճանաչել, բանզի գրողն իր ապրած օրվա, իր գրվածքների սևագրությունը պիտի ունենա:

Վ. Պետրոյանին հաջողվել է կերտել այնպիսի մարդու կերպար, ով օժտված է իր ժամանակը ճիշտ տեսնելու, ճանաչնելու ունակությամբ և խորապես ըմբռնում է կյանքի զարգացման օրինաչափությունն ու հակասությունները: Վարուժան Շիրակյանի ներսում, դեմ-դիմաց կանգնած են մարդն ու խիդճը, այնտեղ միավորում են և մեղադրողը, և մեղադրյալը, ու նա ձգուում է ինքն իրեն հաղթել, արթնացնել իր մեջ քնած մարդուն, հավատալ նրա ներսում ապրող բարության հատիկի զորությանը: Սյուզին և Հեղինեն, որ սիրում են Վարուժանին և հանձին նրա պատկերացնում իրենց իդեալը, անձնական շփման ընթացքում նրա մեջ չեն գտնում իրենց երևակայած մարդուն և հիապահված հեռանում են: Այս դեպքում է միայն, որ Վարուժանն ապրում է զղշման պահենը, հուսախարություն, սպասումի կարու ու դառնություն: Նա խորապես զգում է, որ խսկական սերը հոգս է, բնո՞ւ, պիտի դիմանալ նրա ծանրությանը: Վարուժանն իր անձնական դրամայից վեր է դասում սիյուռի զավը. հայ սիյուռը պիտի «զավագրկել», որովհենու զավի անմիջական տերը նա է, պատմության դառնությունը նա է ճաշակում: Եվ նա հասկացավ, որ արտասահմանում հայություն պահպանելը սեփական յուղի մեջ տապակվելն է: Սիյուռի վերաբերյալ Վարուժանի և Արտամի հայացքները բարդ ու հակասական են: Որքան էլ իրական լինեն կրքերի բախումն ու զադափարների պայքարը, այնուամենայնիվ, ընդհանրության մեջ ողբերգական աննծը է դրոշմված օտար ափերում ապաստանած մարդկային ազգային իղձերում և վերադարձի ապարդյուն ճիզերում: Իբրև այս ամենի խորիդանիշ, վեպի մի այլ հերոս՝ Արթուրոն, բոլոր ազգերի գրականությունների պյութեներում թափառող երգիչը, մարդկային հոգու զավը փարատում է կորսված իղձերի, օտարված հայրենիքի հուզիչ մեղնդիներով. Քո զավը, Հայրենիք, կրակն շապիկ է, հազնում եմ, վառում է, հանում եմ, մնանում եմ...: Արթուրոյի հայրենակարու երգը դառնում է յուրատեսակ ռեբվին: Նա երազում է զնալ Հայաստան, կույր աչքերով տեսնել Արարատը, քայլել Երևանի փողոցներով, լսել հայերեն խոսակցություն, լսել հայերեն ծիծաղ, զգալ հայկական ջերմություն:

Վ. Պետրոյանը Պողոս Թույյանին և նրա նմաններին հակադրում է Բայրենսում ապրող կույր երգիչ Արթուրոյին, Շոտլանդիայի ռեստորաններից մեկում իր փոքրիկ Հայաստանը կերտած Պետրոս Աղանալյանին և հեռավոր այլ վայրերում քրմի նման ողջակիզվող հազարավոր հայերի, որոնք պահպանում են իրենց ինքնությունն ու մայրենի լեզուն: Խզուր չեն մեծն Վիլյամ Սարոյանն արել այս փայլուն եղրակացությունը. «Որքան ալ փորձեք կործանել Հայաստանը, անհնարին պիտի ոլլայ, որովհենու երք երկու հայեր այս աշխարհի վրայ հանդիպին որևէ տեղ, տեսէք, թէ՝, ինչպէս պիտի կերտէ նոր Հայաստան մը»<sup>1</sup>: Վեպի երկրորդ խորագիրը հեղինակը կոչել է «Կրակն շապիկ»: Հայրենիքի զավն է այդ կրակն շապիկը: 1934թ. հրատարակած իր վիպակը ևս այդպես է անվանել հայտնի արձակագրուիկ Զավել Եսայանը, որի հերոսների համար կրակն շապիկը թե՛ հայրենաբնակների, թե՛ սիյուռահայերի հազին է, իսկ սիյուռահայության թեման շոշափում է բավականին համակողմանիորեն՝ դարձյալ կասկածների ու համոզմունքների, հավատի ու անհուսության շփոթ անցումներով:

Իսկ Վարուժան Շիրակյանն, այնուամենայնիվ, կատարում է թոռնիկի իր պարտքը պապի հիշատակարանի առաջ. նա զաղթաշխարհում փորձում է գտնել Հայաստանը՝ «հուսահատ զրադմունք»:

Խորիդավոր է «Կրակն շապիկ» վեպի ավարտը, երբ զերդատանի մեծ մայրը՝ Նունե տատը, թռուանն է հանձնում կարսի իրենց տան բանալիները, որ պահում էր տարիներ շարունակ՝ որպես սուրբ մասունք: Ո՞վ և ե՞րբ կկարողանա ի զորու լինել բացելու Արևմտահայաստանի դրությը:

Համենայն դնալու, հայության «մեծ երազի» հավաքական «բանալին» պիտի պահպաններ ու փոխանցենք սերնդից սերունդ, դարից դար:

«Կրակն շապիկ» երկի շուրջ բախվեցին տարբեր կարծիքներ, մոտեցումներ, տեսակետներ: Հիրավի, ընթերցողը Վ. Պետրոյանի հերոսների հետ վիճելով, տիրելով, կասկածելով, տառապելով, փնտրելով, համաձայնելով կամ շիամաձայնելով մտորում է բարձրածայն: Որոշ գրականագետների կարծիքով վեպն ավելի կշահեն, եթե որոշ հարցադրումներ, ճակատային չլինեին: Կան կերպարային նմանություններ, հերոսների մի մասը նույն լեզուով է խոտում, կատակարանությունները չափավորված չեն: Թույլ են կանանց կերպարները, գործող անձինք շատ են ենթարկվում գրողի կամքին: Մենք, թերևս շիամաձայնենք այս կարծիքների հետ, քանի որ վեպն արժեքավոր է այսօրվա համար: Իր բազմաթիվ

<sup>1</sup> Սարոյանի ճշմարտության հետևեց, Եր., 2009, էջ 36

Երկնրում վ. Պետրոսյանը տարբեր կողմերից անդրադարձել է հայ ժողովրդի անցյալի, ներկայի և ապագայի հարցերին: Մեր կարծիքով ճիշտ են նկատում այն գրականագնուները, որ «Կրակն շապիկը» որոշ առումով նոր անսովոր հայացք է, որ տարբերվում է ավանդական դիրքորոշումով, գուցե դրա համար էլ դժվարամար է:

1987թ. օգոստոսի 12-ի «Սովորական Հայաստան» թերթում «Այրող շապիկ» վերնագրի տակ տպագրվեց խմբագրությանն ուղղված մի նամակ, որտեղ հեղինակը քննադատում է Ծահեն Թաթիկյանին՝ Վարդգես Պետրոսյանի վեպի ճիշտ չգնահատելու համար: «Ը. Թաթիկյանը, ինչ-ինչ զուտ արտաքին զուգադիպություններով որոշում է, որ հեղինակի հայացքների կրողը զլսավոր հերոս Վարուժան Շիրակյանն է, ավելին, որ նա ունի ինքնակնենսագրական գծեր: Բացի այդ, մեջբերելով հերոսի անձնական և ստեղծագործական ճգնաժամի պահին արտասանած «այիտի կարողանանք մոռանալ անցյալը» բառերը, հապշտապ նզրակացնում է, որ վ. Պետրոսյանը բարողում է մոռանալ հայ ժողովրդի հսկայական զոհերը: Ելույթ ունեցողը այստեղ ևս կամ լավ չի կարդացել-հասկացել վեպը կամ չի կամեցնել հասկանալ: Առնվազն անհեթեթություն է ընդհանուր տեսքից անջատել մի բար, մի նախադասություն և դրա հիման վրա ընդհանրացումներ անել»<sup>1</sup>, - գրում է նամակի հեղինակ Յու. Հովհաննիսյանը: Գրախոս-նամակագիրը, զնահատելով վ. Պետրոսյանի նշված երկը, գրում է. «Անզամ, եթե գրի բոլոր հերոսները բղավենին անցյալը մոռանալու մասին, միևնույն է, գիրքը ինքը հիշողության արգասիք է և մեզ հուշում է. հիշեցնք մեր բոլոր անմեղ զոհերին»<sup>2</sup>: Վեպի հենքը գործված է մի մեծ զերդաստանի պատմությունից, որն է մեր ժողովրդի ճակատագիրը, որի անդամները գրվել են աշխարհով մեկ, իհարկե ոչ երջանկությունից ու բախտավորությունից և չեն կարողանում միասին հավաքվել իրենց տան հարկի տակ: Իսկ դրան զուգահեռ ներկայացվում են հայոց եղենին սարսափները արդեն թուրքի՝ Մուստաֆա Ներիմի, վավերական վկայություններով: Գրքի բնաբաններից մեկն էլ ընտրված է Վահե Քաչայի հետևյալ խոսքները. «...Ամեն հայի ձեռքի մեջ մի սպի է, որից դեռ արյուն է կաթկթում»<sup>3</sup>:

Վ. Պետրոսյանի «Կրակն շապիկ» գրի շուրջ բորբոքվեցին վեճեր: Ակադեմիկոս Մերգեյ Սարինյանի ողամիտ հարցադրումներին՝ «Անհիմն կլիներ ենթադրել, թե զրողը փորձում է հավասարակշռել մեղքների ու թողության նժարները և դրանից հանել հաշտության տրամաբանական հետևություն», կամ «Ուրեմն, ո՞րն է ելքը՝ հավիտենական ատելությունը, թե՞ պատմության անցած եղելությունների օբյեկտիվ վերլուծությունը», հետևեցին Ծահեն Թաթիկյանի սուտ շեշտադրումներով դատողությունները երախտամոռության, անզամ դավաճանության մասին՝ «...ամբողջ Սփիտքը, մեր ժողովուրդը իր առողջ բնագրով ունի մի սևնում չմոռանալ, Վարդգեսը հակառակն է զոտում: Իսկ Սարինեանը ջանք ու երանդ չի խնայում ընթերցողին համոզելու, որ մեր յետագայ առաջընթացի պայմանը անցնալը մոռանալն է, ապա բարեկամութիւնը թուրքների հետ... Ես Վարդգեսի վերաբերմունքը դեպի Սփիտքը կ'որակէի երախտամոռութիւն, անզամ դավաճանութիւն»<sup>4</sup>, - կարդում ենք «Զարթօնք»-ի, 1987., հոկտեմբերի 21-ի համարում: Սակայն վ. Պետրոսյանը կրկին իր ճշմարտացիության նկատմամբ ներքին համոզմունքով ողախոհության կոչ է անում իր ընդիմախսուներին. «Հարց է առաջադրված և ոչ թե լուծում, թող վերլուծեն և որոնեն պատասխանը: Իսկ որ մի օր ազգը կանգնելու է այդ հարցի առաջ, որևէ կասկած չի կարող լինել: Ես որոշ իմաստով զոհ եմ այս ամենի համար. Նշանակում է ես հասել եմ իմ նպատակին, ապագան ցույց կտա իմ վեպի գրական արժենքը»<sup>5</sup>, -ընթերցում ենք «Գրական թերթի» 2013թ. №6-ում: Իր իսկ տված զնահատականն առավել քան հատակ էր՝ «Եվ եթեն «Կրակն շապիկ» վեպում ես տեղ-տեղ նաև ավելի եմ թանձրացրել մեր որոշ հիմանդրությունները, եթեն վեպի որոշ հերոսներ խոսելու փոխարեն հաճախ պարզապես ճշում են ցավից, այդ ամենը թելադրված է սիրուց, ամենից առաջ՝ սիրուց, բացառապես սիրուց»<sup>6</sup>: Այսօր ահա կարող ենք մենք ավելիով հաստատել վ. Պետրոսյան գրողի, մտածողի, ճշմարիտ և իրատես

<sup>1</sup> Սովորական Հայաստան, 1987, օգ. 12

<sup>2</sup> Սույն տեղում, էջ 46

<sup>3</sup> Սույն տեղում, էջ 47

<sup>4</sup> Զարթօնք, 1987, 21 հոկտ. –մարտ

<sup>5</sup> Գրական թերթ, 2013, №6

<sup>6</sup> Գրական թերթ, 1987, հունվար 9

հայրենասերի գաղափարներից շատերի կենսունակության փաստը: Իզոր չէ, որ ակադեմիկոս Ս. Սարինյանը իր «Ի հեճուկս» գրքում արձանագրել է. «Արդեն 1988թ-ն էր, ազգային զգացմունքների բորբոքված պահին անհասկանալի, անակնկալ և անբացատրելի էր հայ-թուրք հարաբերությունների առնենաման, հանդիպադրման երկխոսության այն մոտիվը, որ առաջադրում էր Վարդգեսը, մոտիվ, որ այժմ դարձել է դիվանագիտական քննարկման առարկա, ներառնելով ցեղասպանության, հայ դատի, հասուցման և նմանատիպ այլ հարցեր»<sup>1</sup>: Անշուշտ, «Լրակե շապիկն» հենց այն գրական գործն է, որի կանխատեսումների մասը դեռ պիտի իրականանա:

Որքան գնում ենք դեռայի Վարդգես Պետրոսյան գրողի ստեղծագործության խորքը, այնքան ավելի ենք զնահատում մի հեղինակի, ով զանկացած երկում բացվում է ամբողջությամբ՝ չվախենալով ոչնչից: Բացվում էր, որպեսզի ինքն իրեն ճիշտ հասկանար, և աշխարհն իրեն ճիշտ հասկանար: Պատահական չէ, որ «Ազգ» թերթի 2002թ. Հոկտեմբերի 22-ի համարում «Լրակե շապիկ հազար մարդը» խորագրի տակ գրականագեն Ս. Գալյյանը մեջբերում է Վ. Պետրոսյանի խոսքերը «Տվյլք զանկացած մարդու կենսագրություն, և նս, լսու այդ կենսագրության կարող նմ ներկայացնել և՝ լուսապսակով առարյալ, և՝ սատանա... Ուր աշխատել նմ, զանկացնել նմ իմ խոսքն ասել, իմ մթնոլորտը ստեղծել: Ես հանձարենիների երամի մեջ չեմ: Կարեորն այն է, որ գրածդ ամեն տող ու գիրքն ազնիվ լինի, քո միջով անցած: Գրականության և ժուռնալիստիկայի մեջ աշխատել նմ լինել այդպիսին»<sup>2</sup>: «Լրակե շապիկ» երկը, հիրավի, հեղինակի հոգու և սրտի միջով անցած երկ է: Քննադատության կրակի տակ այն դիմացավ և ձեռք բերեց արդիական հնչեղություն՝ դառնալով հայեցի դաստիարակության անփոխարինելի դպրոց՝ հայ լինելու, հայեցի ապելու իր անուրանալի բանաձևով: Իրավացի է գրականագետ Վ. Այվազյանը. «Յուրաքանչյուր գրող ունի ստեղծագործություններ, ուր առավել ուժգնությամբ են երևում նրա անհատականությունը, ընտրած հերոսների բնավորությունը, ոճի յուրահատկությունը, ստեղծագործական մոտիվները»<sup>3</sup>: Հիրավի, մարդու բաղաքացիականության, կյանքի հանդեպ նրա դիրքորոշման բազմապիսի հարցերի քննությամբ, երկը ներկայացնում է մեր բարդ ու հակասական կյանքը՝ իր բովանդակ էությամբ, իր նվաճումներով ու անկումներով, հոգսերով և ուրախություններով:

## Տեղեկություններ հեղինակի մասին

**Մելինն Սողոմոնյան – ԱրՊԿ ասպիրանտ, հայ գրականության և լրագրության ամբիոն**

E-mail: soghomoyan-8890@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.դ. Ս. Խանյանը:

<sup>1</sup> Ս. Սարինյան, Ի հեճուկս, Ստեփ., 2006

<sup>2</sup> Ազգ, 2002, հոկտ. 22

<sup>3</sup> Գալուն, 1986, №12, էջ 39